


Քուսակ	12 ծր.
Պուրջիկ	6 »
Արսասանակի հա-մար	15 »
Վեցանակայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 ծր.
Վեցանակայ	1.50 »
ԿԱՆԻՅԻՎ ՎՃԱՐԵԼԻ	

Մանուկան տղա առաջին երեսին համար 40 սանթիմ հ. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ հ. երեսին առաջին անգամ համար 20 Օլո գեղջ կրչայ :

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՄԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՈՐԵՐԸ

R. P. Kalémecarian  
(Autriche)  
Mechitharistangasse W. 4  
Vienne  
Barna  
Redaction du journal  
«Charjoun»  
Varna (Bulgarie)  
Մասնաճյուղի անդամ  
(20 ՍԱՆԹԻՄ)  
Պուրջիկի համար ձեռքի  
(15 ՍԱՆԹԻՄ)

**Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ**

Դիլառուր գործակալ

ՊՈՒԿԱՐ ԿԱՌԱՂԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇ-  
ԽԱՒՈՐԵԱԼ ՍՕՑԻԱԼ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱԿ  
ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնել փափագողները կրնան  
իրեն դիմել  
Չար-Պորիս փողոց Վառնա  
5-25

**ՄԻԼԱՆ ԵՒ ՍԵՐՊԻԱ**

Միլան Օպրէնովիչ չորրորդ  
իշխանն էր Օպրէնովիչեան գեր-  
դաստանին, որ ժողովուրդի պա-  
ւակ և Սերպիոյ անկախութեան  
անդրանիկ կուսակցութեան  
ձեռնարկի Միլոշ իշխանին օրով  
երկրին արքայական հարստու-  
թիւնը եղաւ :

Մնած 1854ին, Միլան Բարիզի  
մէջ իր ուսումը առաւ և Միքա-  
յել իշխանին եղբորական մահէն  
ետքը, որ քաղաքական դաւադ-  
րութեան մը զոհ գնաց Թոփօնի-  
տէրէի մէջ, Պէկրատի մօտ,  
գահ բարձրացաւ անանկ տարի-  
քի մը մէջ, ուր հազիւ պատա-  
նակութեան օրերը իր առջեւ  
կը սկսէին բացուիլ : 1868ին  
երեսակ խնամակալութեան մը հո-  
վանաւորութեամբ, Միլան սկսաւ  
երկրին գործերը վարել : Սակայն  
այս խնամակալութիւնը, որ կա-  
րողացաւ Սերպիոյ պետական  
գործերը ամուր ու հաստատ պա-  
հել, նոյն ազգեցութիւնը շունե-  
ցաւ Միլանի մոլեգին ու անզուսպ  
հոգւոյն վրայ, ու չի կրցաւ ա-  
պագայ վեհապետը պատրաստել,  
անոր սորվեցնել կառավարու-  
թեանց ամենէն դժուարագոյնը :  
Իր անձին կառավարութիւնը :

1872ին իշխան Միլան երկրին  
կառավարութիւնը ձեռք առաւ :  
Իր ներքին քաղաքականութիւնը  
թէեւ առեւտրային յեղձեցուկու-  
թիւն մը կը պարունակէ նախա-  
րարներու և սիստեմներու ան-  
վերջ փոփոխութիւններով, քա-  
ղաքական կարգ մը անձերու  
հանդէպ իր ծայրայեղ «ք.ք.է-

թընդդէմ» իսկ ուրիշներու նկատ-  
մամբ բուռն ու անհաշտ թշնա-  
մութիւնով, բայց «օֆօն» կա-  
տարեալ միակերպութիւն մը կը  
ներկայացնէ : արմատականներու  
հանդէպ խօս առեւտրութիւն մը՝  
որ միայն իր կեանքին հետ պի-  
տի վերջանար : Արմատական  
կուսակցութիւնը կը նկատէր իւ-  
րեւ իսկ ու անտաշ ռամկավար-  
ներու հաւաքածոյ մը, Պետու-  
թեան և մասնաւորապէս Օպրէ-  
նովիչներու գերդաստանին թըշ-  
նամի, առանց բացառութեան :  
Բայց արմատական կուսակցու-  
թիւնը Սերպիոյ մէջ միակ գոյու-  
թիւն ունեցող ժողովրդական  
կուսակցութիւնն է : Միլան թէեւ  
իր կառավարութեան մէջ կը  
ստիպուէր յաճախ անոր սեղատու  
ձեւացնել ու անոր մէկ քանի  
պետերուն հետ տեսակ մը հաճո-  
յակատարութեամբ վարուիլ,  
բայց գործնականին մէջ միշտ  
կաշխատէր ոչնչացնել թուղթի  
վրայ և օրէնքի անունով անոր  
տրուած առանցնաչնորհումները :  
Ամէն անգամ արմատականներէ  
նախարարութիւն մը կազմուելու՝  
գաղտնի դաւեր կը նիւթէր ա-  
նոր դէմ, և երբ արմատական  
պետի մը թեւ կուտար, կարծես  
ըսել կուէր. «հակառակորդս  
կը գրկեմ, բայց խեղդելու հա-  
մար» :

Ու երբ իշխան, յետոյ թագաւոր  
ըլլալով, Միլան օր մըն ալ դա-  
հէն հրաժարեցաւ, կրկին շա-  
րունակեց իր կուսը արմատա-  
կաններու դէմ, փորձեց իր տղան  
Ալէքսանար թագաւորն ալ նոյն  
ճամբուն մէջ դնել, երիտասարդ  
արքային ժողովրդականութիւնը և  
նոյնիսկ իշխանութիւնը վտան-  
գի ենթարկելով, Ամենէն յաւ-  
ուազն հնարագիտութեանց ու  
իշխանութեան ամենէն գայ-  
թակղալից ծայրայեղութեան դի-  
մեց արքայասպանութեան հնա-  
րածոյ դատին ատեն : Ամենա-  
խիստ պատիժներու դատապար-  
տել տուաւ յայտնի անմեղ-  
ները : Բայց կրնանք ըսել թէ  
Սերպիոյ նախկին թագաւորը  
մեռաւ իր յաղթութեան մէջ պա-  
տանքուած :

Նոյնքան զուր և երբեմն նոյն-  
քան ազետարեք եղաւ իր երկ-  
րին համար Միլանի արտաքին  
քաղաքականութիւնը :

Հոս ալ նոյն առեւտրային երկ-  
դիմութիւնը, նոյն գեղեցումը  
երկու մեծ պետութեանց մէջ,  
որոնցմէ կախում ունի թէ՛ պատ-  
մութեամբ և թէ՛ աշխարհաքա-  
կան դիրքով՝ Սերպիոյ թագաւո-  
րութիւնը, Ռուսիան՝ որ իր պա-  
տմութեան օգնած է և Աւստրիան՝  
ուրկէ կախում ունի այս երկիրը  
ստեղծագոյն :

Առանց մեծ ճիգ մը ըրած ըլ-  
լալու, Պերլինի գաշնագրին յա-  
ջորդ օրը Միլան ինքզինքը ան-  
կախ իշխան հռչակուած գտաւ  
300,000 նոր հպատակներ ստա-  
նալով, և 1882ին ալ թագաւոր  
տիտղոսը առաւ : Միակ յան-  
գուզն քայլը զոր առած է ար-  
տաքին քաղաքականութեան մէջ,  
Պուկարիոյ դէմ հրատարակած  
կռիւն է Արեւելեան Ռումէլիի  
գրաման առթիւ, որ Միլանի  
ու Սերպիոյ համար կատարեալ  
անկում մը եղաւ : Եթէ Սլիվնի-  
ձաի պարտութենէն ետքը Աւս-  
տրիոյ միջամտութիւնը եղած  
չըլլար, պուկարական երիտա-  
սարգ բանակը Սերպիոյ սահմա-  
նը անցած, Միլանի գահն ու իշ-  
խանութիւնը վտանգի ենթար-  
կած էր :

Իր դիւանագիտութիւնը Ռու-  
սիոյ նկատմամբ խոր անվստա-  
հութենէ մը և Աւստրիոյ հան-  
դէպ ծայրայեղ հաճոյակատարու-  
թենէ մը ներշնչուած էր, ինչ որ  
արդիւնք էր, գրամին շնորհիւ  
այս վերջինին Պետութեան ու  
պալատին մէջ հզօր ազգեցու-  
թիւն մը ձեռք բերած ըլլալուն :  
Եւ որքան ատեն Միլան, թէ՛ իբր  
անհատ և թէ՛ իբր թագաւոր  
Վիեննայի պարտատէրը, Պուկ-  
րատի մէջ իշխեց, կրնանք ըսել  
թէ Սերպիան Աւստրիոյ պերիշ-  
խանութեան տակ մնաց :

ԹԱՆ

**ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ**

ԹԱՒԻՉ, 14 Յունուար

Այսօր Ղալա թագում թեմիս  
առաջնորդ Գեր. Սահակ եպեսկ,  
Այվատեան գիւղերի համար ե-  
րեք հատ քահանայ ձեռնադրեց :  
Երկու տիրացու Պետրոս և Նի-  
կողայոս Աւմիի Գեարդապատ  
գիւղի համար և տիրացու Աբրա-  
համ վանեցի Բարսեղուղի գիւ-  
ղերի համար : Առաջի երկուսը  
իրենց կրթութեամբ այդ պաշ-  
տօնը «եօլա» տանող բաներ են,  
իսկ վերջինս Գ.րգ. կարգի ու-  
սուցչական կրթութեան տէր է,  
որ երեք-չորս տարի է վերոյիշ-  
եալ գիւղում ուսուցչի պաշտօն  
էր վարում : Լսում ենք որ Թաւ-  
րիղի հայուհեաց բարեգործական  
ընկերութիւնը սիրտ է արել վե-  
րոյիշեալ նորընծայի նիւթական  
ապահովել, եթէ հաւատանք մեր  
լսածին, ընկերութիւնը քսանե-  
րորդ դարի սկզբին զովասանքի  
արժանի մի գործ պէտք է արձա-  
նագրի իր գործերի մէջ :

Հայերս ընդհանրապէս զուրկ  
ենք կրթւած, արժանաւոր քա-  
հանաներից, իսկ Պարոկաստանը  
խօս այդ կողմից ամենաողորմելի  
վիճակի մէջ է : Չեմ ասում գիւ-  
ղերում՝ շրջեցէք քաղաքները  
գոնէ ուղիղ գրել-կարգալ իմա-  
ցող քահանաներ դեղի համար  
հազիւ կը ճարէք : Վերցնենք  
հէնց Թաւրիզը, որ հայաշատ  
քաղաքներից մէկն է, մի հատ  
կրթւած քահանայ չունի, եղած-  
ներն էլ բացի տգէտ լինելուց,  
որը ձերայցած, հալից ինկած իր  
գլուխն չի կարող կառավարել,  
որն ալ իր կոչման բարձրութիւ-  
նից այնքան սիր է, որ իր  
սրիկայական վարք ու բարքով  
ժողովրդի զուլանքին է միայն  
արժանացել : Թող ների ինչ ըն-  
թերցողը, եթէ այս անգամ խօսքս  
մասնաւորում եմ :

Վերոյիշեալ քահանան քաղա-  
քիս Լիւլաւ թաղի Տէր Ղեւոնդն  
է : Այս քանի տարի է թաղիս  
ժողովուրդը նրա ամեն կապրիզ-  
ները տանում է, ինչ է—մեռել

Թաղող, կնուճք անող կամ պսակ կատարող պիտի ունենայ: Յանցանքը մեր ժողովուրդինն է, որ ծուլութիւնից շուքեց մէկ օր հաւաքել, խորհուրդ անել այդ երկնից պատուհասից սզաուելու: Երբ որ արդէն դանակը սուկորին էր հասել, հազիւ հազ մէկ օր սիրտ արեցին հաւաքել և այդ անիրաւ քահանային երեսուերես ասել. «Տէր հայր, քեզանից կշտացանք, բարով եկար, բարով գնաս»: Գահանան յանգգնեց ժողովրդին արհամարհելով դուրս գալ և գնալ առաջնորդարան հոգեւոր իշխանութեան դէմ անկարգ ցոյցեր անել: Այդ անիրաւ վարմունքի համար արդէն, որոշ պատիժ ստացել է կաթողիկոսից, բայց դարձեալ հանդիստ չի մնում: Հիմա էլ դոնէ դուռ է ման գալիս և սպառնում առաջնորդին կամ սրաներան սպանել: Ո՞վ է մեղաւոր: Ի հարկէ մենք, որ այդպիսի սրիկաներին փոխանակ մեր միջից իսպառ հեռացնելու, բերում մեր գլխին հոգեւոր հովիւ ենք նշանակում: Այսքան փորձերից յետոյ կարծում ենք մեր ժողովուրդը պէտք է սթափուած լինի: Թող իր միջից մի կրթեալ ու արժանաւոր մարդ բնտրի և առաջարկէ առաջնորդի քահանայ ձեռնադրելու:

Ո՞ր են Արամեան դպրոցի և Լիւաւայի տւած պտուղները: Լիւաւայից դեռ մենք այնքան պահանջ չուենք, նա դեռ հազիւ այս վերջին երկու երեք տարիներ ընթացքում սկսել է կանոնաւորել, իսկ Արամեան դպրոցը 50 տարուց աւելի է զոյնութիւն ունի և այդ 50 տարւայ ընթացքում մեր հասարակութեան համար մէկ պիտանի մարդ չէ տւել: Ափսոս դպրոց, որ 50 տարւան կեանքիդ մէջ ոչինչ տւիր և ոչինչ ես տալիս, երեւի զեկավարներդ ոչինչ են: Եթէ ո՛չ, ինչո՞ւ պէտք է ամբողջ հինգերորդ դասարանդ և չոր-

րորդ դասարանից էլ շատերը կիսաք թողած վազ տային դէպի վաճառականների գրասենեակները: Մարդկութիւնը արդէն մտել է քսաներորդ դարը, արդեօք ունե՞ք բարեհոգի մէկը, որ քեզ էլ քո փթած վարիչներով միասին շաւակի տանի այդ լուսաւոր դարը:

Միակ յոյսերս ու սպասելիքներս մնում է Լիւաւայի վրա, գոնէ այս երկու երեք տարւայ ընթացքում այդ դպրոցը յառաջադիմելու շանսեր է ցոյց տալիս: Սրանց մօտ հակառակ երեւոյթէ նկատուում, վաճառականների գրասենեակներից փախչում են դպրոց: Այժմ վերոյիշեալ դպրոցը ունի սղաների չորրորդ դասարան և տարեց տարի աշխատում է դասարանների թիւը աւելացնել: Եթէ մեր այս թաղի հոգաբարձութիւնը շարունակի նոյն ոգով և նոյն եռանդով մինչև վեցերորդ դասարան, վստահ կարող ենք ասել, որ այն ժամանակ մենք կարող ենք ունենալ գիւղերի՝ նոյնիակ քաղաքների համար կրթեալ և արժանաւոր քահանայացուներ և ուսուցիչներ: Յանկանում ենք մեր յոյսերը իրականացած տեսնել:

Մ Ի Ր Ձ Ա

ՌՈՒՍԱՑ ԻՒՍԱՆՈՂԱԿԱՆ Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը

Բ.

Այդ լուրից սարսփահար եղած ուսանողութիւնը վճռում է հանդիսաւոր յարգանքով յաւերժացնել զազանութեան զոհի յիշատակը: Ուրիշ ի՞նչ կարող էր նա անել անթիւ անհամար հրացաններով ու թնդանօթներով զինուած ահարկուարջի դէմ: Նշանակեալ օրը հազարաւոր ուսանողներ հաւաքուած են հոշակաւոր «Գազանքի սօսորոտ» հոգեհանգիստ կատարելու: Վերջանում է պատարագը, սակայն հոգեւորականութիւնը հրաժարում է հոգեհանգիստ կատար-

ելուց: Ուսանողներն իրանք ներգաշնակութեամբ երգում են պատշաճաւոր աղօթքները և ուզում են ցրել հեռանալ, Բայց ո՞ր, ի՞նչ պէս: Տաճարը շղթաւուած է անթիւ զինւորներով... Սկսում է խլրրտում-իրարանցում, ձերբակալումներ ու փախուստ:

Ուսանողներից շատերը բանտ են տարուում, շատերի անուններն են արձանագրում, մի մասն էլ փախուստով է ազատում:

Սակայն դրանից յետոյ էլ շարունակուում են խուզարկութիւններն ու ձերբակալումները: Բանտերը լցում են անմեղ զոհերով: Վերջապէս սկսում է մի երկար ու ձիգ քննութիւն, որի անարգարութեան գոհ են գնում բազմաթիւ ուսանողներ: Ոմանք արձակուում են, ոմանք աքսորում և բարեխնամ կառավարութիւնը ցոյց է տալիս. թէ այդ բոլորը միայն մի քանի անմիտ երեխաների արարք էր և ուրիշ ոչինչ: Ո՞րպիսի ինքնախաբէութիւն:

Գ.

Ժամանակը սահում է առաջ ու առաջ, Բայց Ռուսաց բռնակալական կարգերը չեն փոխուում: Վրայ է հասնում 1899 թւականը և ուսանողութիւնը մի նոր հակայական ցոյց է անում դրա դէմ: Ահա թէ ինչպէս:

Փետրվարի 8ին կատարուելու է Պետերբուրգի համալսարանի սովորական սարեկան հանդէսը. բեկտորը պատերից կախ է անում մի յոյսաբարութիւն, որով ոստիկանութիւնից ստացեալ նախազգուշացման հիման վրայ խնդրում է ուսանողներին այդ օրը հանգիստ լինել, փողոցներում անկարգութիւն չանել և այլն: Ուսանողութիւնը վրաւորում է և վճռում է իր նախատիքն արտայայտել բեկտորին, որը զիտութեան տաճարում ոստիկանական հրահանգներով է առաջնորդում:

Բեկտորն ուզում է ճառով բաց անել հանդէսը, սակայն ուսանողները շուտով ու աղմուկով խանգարում են նրան. հանդէսը չսկսւած վերջանում է, և ուսանողական բազմութիւնը դահլիճը զղրղացնում է յեղափոխական երգերով: Վերջապէս սկսում են ցրել, բայց բոլոր փողոցներում հանդիպում են ձիււոր ոստիկանների, որոնք մտրակի հարւածներով

ստիպում են ուսանողներին խուճը խուճը շղթալ: Այդպիսով օրը ցերեկով, համալսարանի շուրջը—դարձեալ արքունիքից միայն մի քանի քայլ հեռու, սկսում է մի անհաւասար մրցում զինւած ոստիկանութեան և անդէն ուսանողութեան մէջ: Հէնց նոյն երեկոյ սկսում են խուզարկութիւններն ու ձերբակալումները:

Բայց ուսանողներն էլ քնած չեն, նրանք մէկ սիրտ—մէկ հոգի եղած վճռում են դասախօսութիւնների շայցելել մինչև որ իրանց ընկերների վիրաւորեալ պատիւը չը վերականգնի: Փակ են մնում բոլոր բարձրագոյն դպրոցները. թէ արական և թէ իգական, թէ մայրաքաղաքում և թէ գաւառներում: Այդպիսով Պետերբուրգից մինչև Տոմսկ, Մոսկովայից մինչև Օտտոա, Կիեւ, Ուրսկով, Դոբրատ, Րիգա և այլն ուսուսանողները միացնում են իրանց բողոքի ձայնը բռնակալութեան դէմ:

Տենդային դրութիւն է, ամբողջ հասարակութեան համակրանքն ուսանողների կողմն է: Բացառութիւն է կազմում Վեօվոյէ Վէժմիաի հրատարակիչ Սուվորին իր արբանակներով:

Տեղի են ունենում պրոֆեսորական ժողովներ, նախարարների խորհրդակցութիւններ, անվերջ բանակցութիւններ, բայց բոլորն էլ անօգուտ: Ոչ մի բան չի կարողանում համոզել ուսանողներին հին կարգը վերականգնելու: Այդպէս անցնում են չաթաթներ—նոյն իսկ ամիսներ: Վերջապէս ոստիկանութիւնը դիմում է խորամանկութեան. նա համալսարանի առաջ խմբուած ուսանողներին հրախրում է Մանչէ կոչուած տեղում իրել թէ բանակցելու: Այդտեղ հազարից աւելի ուսանողներ մի ամբողջ օր մնում են բանտարկեալ և ուսնց հաց ու ջրի: Վերջը ոստիկանութիւնը նրանց մէկիկ մէկիկ առաջնորդում է կամ զէպի բանա կամ զէպի հայրենիք: Այդպիսով բողոքող զխաւոր ստորը հեռանում է և զըպրոցական վարչութիւնը մի կերպ կիսատ—պատս վերջացնում է տարեկան քննութիւնները:

ՌՄԲԱԿՈՒ

(Շարունակելի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ՀԱՐԿԱՒՈՐ Է ԱՐԴԵՐԹ ԹԻԱՆՇԱՆ ՈՒ ՔՆՆՈՒԹԻՒՆ

— — — II

Դիցուք ֆիզիկայից ուսուցիչը անցնելու է, թէ տաքութիւն ու ցրտութիւն ինչ ազդեցութիւն ունին մարմինների վրա. ուսուցիչը փորձերը կանէ. զիտելուց ու նոր մտապատկերներ հաւաքելուց յետոյ, ուսուցչի հարցով նրանք կնշարկանեն, որ տաքութիւնից մարմինները լայնանում են, իսկ ցրտութիւնից կուճ են տալիս: Կրկնում եմ, զպրոցական-

ները իրանց ուսման ընթացքում միշտ գիւտեր և գիւտեր են անելու. միայն այդ կերպով սովորածը կարող է նրանց սեպակալանութիւնը լինել: Ապա թէ ոչ գնալ ու ամեն բան պատրաստի տալ, ճիգ թափել որպէս թէ պարզ բացատրելու, զուր աշխատանք է, այս կերպով աշակերտ աշակերտուհիներին սովորեցրածը մեծ մասով անհասկանալի ու անմարս կը մնան: Մինչդեռ այն մեթոտը, որ աշակերտ—աշակերտուհիները գիւտեր ու եզրակացութիւններ են անում տւած փաստերի հիման վրա, անկասկած հետզհետէ նրանց մտածողութիւնը լայնացնում է, նրանց մէջ մտցնում է հարցասիրութիւն. աշակերտ—աշակերտուհիները չեն լինի մեքենաներ (պասիֆ գերկատարող), որ միայն անդիբ պիտի անեն ուսուցիչների ասածները, այլ

ընդհակառակը նրանք ակտիֆ գերկատարողներ կը լինին, Մի՞թէ կարելի է կասկածել, որ այս մեթոտով աշակերտ—աշակերտուհիների մէջ վատ չէ մնում հետաքրքրութիւն, առաջ չէ գալիս բուռն ցանկութիւն սովորել, անվերջ սովորել ու զարգանալ:

Քննութեան ու թւանշանների կողմնակիցները գուցէ հարցնեն, թէ ամբողջ տարւայ ընթացքում սովորածները առանց քննութեան պատրաստուելու ի՞նչպէս կարող են ամբողջացնել:

Նախ որ առարկայական մեթոտով սովորած այնպէս հեշտութեամբ չեն մտաբերում, ինչպէս այդ պատահում է ուսուցչի պատմած ու բացատրածի հետ. երկրորդ, այդ մեթոտով դասաւանդողը իր անցնելիքը որոշ գուրդներ է բաժանում, միմեանց հետ կապում և պէտք եղած զէպրում կրկ-

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՄԱՅՎԱԶԱՅ

Վ. Ա. Ղ. Թ. Ա. Կ. Ա. Ն. Ն. Ե. Բ. Ը

Երկրագործներէն անոնք որ Աստուծոյ եւ Կառուաւոր շրջանի մէջ (200—250 տուն) հողատէր են, կարողացեր են իրենց անտեսութիւնը կանոնաւորել եւ աւելի լաւ տարիքի քան տաճկաստանի մէջ, Ասոնց մէջ հազուադէպ չեն 2—300 ր. կարողութիւն ունեցողներ:

Ռուսաստանի մէջ աշատ (տասուներորդ) չկայ եւ դա մեծ անտեսութիւն է տաճկաստանի երկրագործներուն համար, այնպէս չէին կարող տակալ այստեղի կեանքի թանկ պայմաններուն:

Փողթական երկրագործը գինուորական տուրքէ եւ տասանորդէ ազատ մնալով եթէ աշխատող ձեռքեր ունի եւ վաշխատուներու ցանցին մէջ ընդունուած չէ, կարող է 4—5 տարիէն պարտքերը սալ եւ մի քիչ ալ դրամ աւելացնել, պէտք է խոստովանի որ բոլորովին հին ու նոր գաղթականները աւելի շատ կը շահին այժմ, քան առջ երկրին մէջ:

Վարձու երկրագործները կը մնակին մասնաւոր կալուածատէրերու հողերու վրայ: Հող ըսելով պէտք է հասկնալ մացառապատ անտառներ ու լեռներ, որոնք 6, 7, 8, եւ 9 տարով վարձու կը տրուին մի խումբ գաղթականներու: Ասոնք անտառները իրար մէջ բաժնելէ յետոյ կը սկսին ծառերու կտորածը, տուններ իրենք կը շինեն փայտերով եւ տարի շանցած կը սեննես անտառները արտաբերու վերածուած եւ ծխախոտի ու լապտախի կանաչը չորսդրին պատած: Այդպէս են հաստատուած գաղթականներու բոլոր գիւղերը, որոնց անունները իրենք մկրտած են մեծ մասամբ:

Առաջի տարիները հողի վարձը աժան է, աւելի քան (մօտ 5 տեսնում) 2—3 ր. տարեկան, բայց երբ անտառները արտեր կը լինին, յաջորդ պայմանագրութիւններու ստեն կալուածատէրերը հետզհետէ կը բարձրացնեն տէսիստիւնը մինչեւ 20—25 ր. կեղծ գիւղացիները մի կտոր չոր հացի համար ձրիաբար կը ծառայեն կալուածատէրերու: Խոպան հողերը զարգացնելու եւ անոնց արժէքը բարձրացնելու: Այդպիսի կարեւոր

եւ աժան ուժի յարգը ճանչնալու, եւ ոչ թէ մարդասիրութեան համար էր, որ երբ գաղթականներու վերադարձի խնդիրը յուզուեցաւ, մեծ թուով կալուածատէրեր կը պատրաստուէին բողոքել եւ պաշտպանել գաղթականները այդ կարգադրութեան դէմ:


Մէկ կողմէն հողը ուժասպառ լինելուն եւ միւս կողմէ հողագինները անտանելի կերպով աւելանալուն, երկրագործները կը տեղափոխուին նոր հողերու վրայ եւ անդադար տես զափոխութիւններու հետեւանքով նոր գիւղեր երեսն կիսն են, նորանոր անտառներ արտերու կը վերածուին եւ ոռոսական փերեր կը մաքրուին, կը բարգաւաճին հայ գաղթականներու քրտինքով:

Բոլոր հին գաղթականները եթէ մի քիչ հեռաստեղծութիւն ունենային կարող էին հողատէրեր լինել եւ այժմ բարեկեցիկ վիճակ մը ունենալ: Ինչպէս «գաղթելու պատճառները» զխի մէջ յիշելի, գաղթականներու եկած ժամանակ, Սոխումի Սօջիի շրջանները վայրի գաղաններով լեցուն ամառի տեղեր էին: Սպաս հողեր շատ կային, բաւական էր մի խնդիր տալ եւ ոռոս կառավարութիւնը երկիրը շէնցունելու եւ արխաններն ու չէրքէզները չկողբացունելու համար պատրաստ էր կալուածատէրեր տալ նոյնպէս իրենց տարեկան վճարած վարձերով եւ շատ ձեռնառու պայմաններով կարող էին գնել մասնաւոր հողեր: Հայ երկրագործները բաւականացան միայն օրական հացի ինչն ճարելով եւ չի մտածելին մօտիկ ապագայի մասին: Այդ մօտիկ ապագան չուէր եկաւ: Սեւ Մովսի փերեր շնորհիւ ձրիաբար արդի նարեթի բեան, կենդանութիւն տեսցան: Ժողովուրդէն մանր աւանները քաղաքներ եղան, երկրագործները շատացան, եկան յոյներ, մինկերներ, ոռոսներ գերմանացիներ եւ: Պետերպուրկ Մոսկովա նստող կալուածատէրերը առանձին ուշագրութիւն դարձուցին իրենց մտացուած սեփականութեան վրայ: Սօխումը իբրեւ ձեռնառոց եւ Սօջիի իբրեւ ամառանոց հողակուեցան: Մեծ իշխաններ, մինխտրներ գրամատէրեր պարսէզներ, վիլլաներ կանգնեցին եւ երբ ծրագրուած երկաթուղին մի քանի տարիէն Սեւ ձովի փերերը քերելով կը ստրայ Նովորոսիսկէն Սօխում, այն ատեն այդ շրջանները կը դառնան երկրորդ Ղրիմ:

«Ի վերայ այսր ամենայնի» ոռոս

կառավարութիւնն ալ իր ուղղութիւնը փոխած է: Կողէ կողմաւոր սուսացնել գերակշիռ ընելով ոռոս տարրը թիւով եւ անտեսականով ուստի առանձին ուշագրութիւն դարձուցած է Սեւ Մովսի փերերու վրայ եւ գաղթականական ծրագրները կը մշակէ: Այս տարւոյ զիղըր գանձարանէն 50,000 ր. բաց թողին մի հողատիրական խմբի կազմութեան համար, որ պաշտօն ունի կուրանի (կիտաբիւնար) եւ Սեւ Մովսի չորջանի ազատ հողերը ձեռքի եւ յարմարութիւններ ստեղծելու սուս պաղթականներու համար: Ատլէրի, Սօջիի շրջանները արդէն մի քանի ոռոս գաղթական գիւղեր հիմնուեցան: Կառավարութիւնը բնծայեց ոռոս քանակութեամբ հող, տունները ինք շինեց եւ ամեն մէկ ընտանիքի ալ 50 րուպլի նախնական դրամագրուի սուսաւ: Իսկ հայ գիւղացին հող չունի, ամեն մէկ տուն տարեկան 30—40 րուպլի տուրք (վարձ) կուտայ, տուններ ինք կը շինէ, պարտքեր ունի, չպատա շտանայէն զատ նպատակներ ալ կուտայ եւ դարձեալ աւելի բարեկեցիկ է, քան իր գրացիները: այդտեղ է որ ազգի մը կուլտուրական ուժը կերեւայ: Հետաքրքրականը բնաւ հողը չեն կառավարական խորհրդաւոր ծրագրները եւ ահա այսպիսի պետերները սեղի կուենան: Շատերը որ 50 րուպլի առին, սկսան փառաբար պէս վաճակ կոնծել, յետոյ տեսան որ հողերն իրենց բաւելէն զատ կաւելնայ ալ: որոշեցին վարձու տալ եւ շահիլ: գտան 8—10 տուն հայ գաղթականներ, որոնք հողի կարիք ունէին, սակարկեցին եւ ուժը տարուան համար պայմանաւորուեցան նօտարի հաստատութեամբ: Քանի մը ամուսն մէջ ոռոսներու կողմին հայ տներ եւ ձրախոտի արտեր երեսն եկան: Սօջիի նաշանիկը եւ եկած մասնաւոր քննիչը, ապշելու սուսիճան զարմացան, երբ տեսան հայերը ոռոսներու հողի վրայ, ոռոսներուն լաւ մը հայտնելէ յետոյ, հայերուն հրամայեցին շուտով հեռանալ: Հայերը զոյց տուին նօտարով հաստատուած պայմանաւորութիւնը, պաշտօնեաները ստեղծան մնացին: Առ այժմ յետաձգուած է հայերու հանելը, բայց հաւանական է որ իրագործուի այդ, որը հատուցում տալով հայերուն, որոնք նոր տուններ շինելու համար մեծամեծ ձախսերու ենթարկուած են:

(Շարունակելի)



ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Անցեալ շտաբի որ վառնայի մէջ մեծաւ թագաւոր պատուելի Փափազեան: Հանգուցեալը երկար մամանակ ուսուցչական պաշտօն վարած էր տեղւոյն ազգային վարժարանին մէջ, և այն տեսակ ատեն մը, որ վառնայի հայութիւնը թմրութեան մէջ ինկած ազգային ինքնութիւնը կորսնցնելու վտանգին կը մատնուէր, յաջողած էր իր աշակերտներուն մէջ ազգայնութեան ոգին ու տոհմային պատմութեան ու յեղուին սէրը արծարծել: Այս կերպով կրցած էր պատրաստել սերունդ մը որ պիտի գիտնար իր ազգով, եկեղեցիով ու դպրոցով հետաքրքրուի: Իր ձեռքով վառնայի ազգային վարժարանը այդ անուան արժանի վիճակի մէջ դըրուած էր, կանոնաւոր դաստիարակ կազմուելով և զատանգութիւններ կատարուելով: Թագաւոր պատուելի նոյն արգիւնայնագործունէութիւնը զոյց տուած էր նաեւ Ռուսմանիոյ Ռուսման քաղաքին մէջ, ուր նմանապէս երկար ատեն ուսուցչութեան պաշտօն վարած էր: Իսկ դպրոցէն դուրս պատուելին առիթ չէր փախցուցած իր պատկանած հասարակութեան իրաւունքները պաշտպանելու: Ե իր տնօրէնութեան տակ հրատարակուած է 1885 թ. «Իրաւունք» լրագիրը Փրանսերէն լեզուով:

Փողաքիս ազգային վարժարանաց հոգաբարձութիւնը ի պատիւ հանգուցեալին իր ծախքով շքեղ յուզարկաւորութիւն մը կատարել տուաւ և վարժարանը կէս օր սուգ պահեց: Պաղաղին կընկերակցէին իր նախկին աշակերտները՝ որոցմէ մին, Տ. Մ. Չգոնեան դամբանականով մը պարզեց պատուելին գործունէութեան զխաւոր գծերը, հոգաբարձութիւնը, ուսուցչական

III

Այս մեթոտով առանց թւանշանների, առանց քննութիւնների Լիւլաւ թաղի երկեսո դպրոցները (\*) ահա երկու ուսումնական տարի է,

(\*) «Հայկազեան» տղայոց դպրոցը 1898—99 եւ 1899—1900 ուսումնական տարիներում ունէր վեց տարւայ դասընթաց, իսկ օրինորայց «Թաւառեան» դպրոցը ունի ինկը ճարտար դասընթաց, թէեւ բացառաբար 1899—1900 ուսումնական տարում օրինորայց դպրոցը ունեցաւ լրացուցիչ Գ. դասարան: Ներկայ 1900—1901 ուսումնական տարում «Հայկազեան» տղայոց դպրոցը ունի յոյրտոյ դասարան, այնպիսի եօրե ճարտար դասընթաց է:

որ կառավարուած են: Թւանշանքնութիւնների կողմնակից աւանդապահների պնդածին հակառակ բան դուրս եկաւ: — 1898—99 ուսումնական տարւայ սկզբին աշակերտ-աշակերտուհիների մէջ հետաքրքրութիւն ու հարցասիրութիւն շատ եւ շատ պակաս էր, գրեթէ չկար: Յիշեալ առարկայական մեթոտի շնորհիւ կամայ կամանց նրանց մէջ առաջ եկաւ հետաքրքրութիւն ու հարցասիրութիւն: Ընթերցանութեան գրքերով այնքան գրաւած էին, որ աշակերտական ընկերութիւններ կազմեցին փոքրիկ անդամավճարով, աւետիս ման եկան մանկական գրադարանը հարստացնելու համար, այդ բոլորը արել են ինքնարեքստար: օրինակ՝ 1898—99 ուսումնական տարւայ տեղեկագրից յիշեմ, որ տղայոց Բ. դասարանը ներել է 32 կտոր գիրք:

Ա. դասարանը 12 կտոր գիրք: Նրանց հետաքրքրութեանը նպաստում էր եւ այն հանգամանքը, որ շտաբ օրերը՝ կէս օրից յետոյ երկսեռ դպրոցների Գ. բաժանումները իր սկսած ընթերցանութեան դասեր էին լինում: տղայոց եւ օրինորայց Գ. բաժանումները կազմում էին մի խումբ: Ա. դասարանները՝ երկրորդ խումբը, իսկ տղայոց ու օրինորայց Բ. եւ Գ. դասարանները՝ երրորդ խումբը: Իւրաքանչիւր խումբին մի ուսուցիչ գիրք էր կարգում: բովանդակութիւնը պատմել տալուց յետոյ՝ հարցերով վերլուծել էր տալիս գրքի մէջ պատահած տեղերը եւ ապա ամբողջ գրքի իտէային էին անցնում: Ա. դասարաններից սկսած գրաւոր քննադատութիւն էր ներկայացնում աշակերտ-աշակերտուհիներից մէկը, որի յայտնած կարծիքների վերաբեր-

մամբ վիճարանութիւն էր բացուում նրա ընկեր-ընկերուհիների մէջ: Բացի սրանից գրադարանից կարող էին գրքեր վերցնել շտաբական մի անգամ Գ. բաժանումները սկսած: Գրքերը բաժանուած էին դասարանների հասկացողութեան համապատասխան խմբերի: մի յանձնախումբ էր ընտրուած, որի անդամների պարտականութիւնն էր գրքեր վերադարձնելիս աշակերտ-աշակերտուհիներին մի քանի հարց տալ, որոնցից պիտի երեւար, թէ որդեօք գիրքը կարգացել է եւ որքան է ըմբռնել նրա միտքը: այս ուղղութեամբ 1898—99 ուսումնական տարւայ վերջին սովորական չափից աւելի հետաքրքրութիւն ու հարցասիրութիւն էր նկատուած:

Տիգրան Ռաշխանեան (Շարունակելի)

խումբը, աշակերտները և աշակերտուհիները:

— Պոֆիայի հայրը եկեղեցւոյն մէջ յունուար 30ին, ազօթք կատարուել է Պօրիսի առողջութեան համար:

— Պ. Մարիլիէ «Կիտնոց Ընկերութեան» մէջ ըրած բանասիրութեան մը ատեն մատնանիշ ըրած է Հայաստանի մէջ նոր ջարդերու անխուսափելիութիւնը, եթէ եւրոպա անյայտ չի միջամտէ. «Թրանսվալի ապստամբները ըսեր է Պ. Մարիլիէ, անմոռանալի ջանքեր ըրին որոնք ապարդիւն կը մնան, որովհետեւ եւրոպա չի կրնար անգլիոյ վրայ ազդել: Բայց անիկա կաղզեթուրքի վրայ, յանուն արգարութեան և մարգասիրութեան: «Բերթի ժուրնալի» մէջ տպուած պատկեր մը հայերը կը ներկայացնէր մղկիթ մը կողպտելու վրայ: Սո՛ւտ է: Չէ՛, հայերը կողպտողներ չեն, այլ զոհեր»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մոլլա Ալպանացիներու հռչակագրի պարագլուխը, Փրիշթի նալի մօտ, Իփէթի մէջ (Մակեդոնիա) ուզել է փետրվար ամսոյն մէջ միթինկ մը կազմել միայն Ալպանացիներու համար, բայց Սուլթանին խորհուրդներուն վրայ ետ կեցեր է իր նպատակէն: Սակայն ուրիշ աղբիւրներէ եկած լուրերը կը հաստատեն թէ՛ նոյնատեսակ միթինկներ տեղի ունեցեր են Փրիշթինայի և Տիւրքովայի մղկիթներուն մէջ, հակասութեան ձգտումներով:

— Ռուսական զեպան Ահնովիէվ յնվր. 28ին Երլաղը հրատարակած է Սուլթանէն որ ունկնդրութիւն մը շնորհած է անոր: Քաղաքական շրջանակներու մէջ մեծ նշանակութիւն կուտան այս ունկնդրութեան: Կենթադրուի որ խօսակցութեան նիւթերէն մէկն ալ Մակեդոնիոյ վիճակը և մանաւանդ կօմիթէներու գործունէութեան խնդիրը եղած է: Ինչպանը ի միջի այլոց ըսեր է թէ Ռուսիա լաւ չի նկատեր քօմիթէներու գործունէութիւնը:

— Պարսից եպարգոօր Շահին հրամանին համեմատ Երլաղի հետ բանակցութեան մասեր է մէկ քանի առկախ խնդիրներու կարկազրութեան առթիւ: Եպարգօսին պաշտօնակտն խոստում տրեւր է քիչ ատենէն այդ խնդիրները կարգադրելու: Պարսկական զեպանը հրահանգ ստացեր է լուրջ ուշադրութիւն դարձնել այդ խոստումին իրագործման:

— Ելեւմտից յանձնաժողովը որ քանի մը օրէ ի վեր ելեւմտական նախարարի գեր կը կատարէ, ջանքեր կընէ հինգ միլիոն ֆր. կանխավճար մը ստանալու Տէօչ. պանքէն և եօթը միլիոն ֆր. Պանք Օթօմանէն, ինչպէս նաեւ միլիոն մը՝ հանրային պարտուց վարչութեանէն, բանակին մատակարարներուն դրամը և Իուրպան պայրամի առթիւ պաշտօնեաններուն մէջմէկ ամսական վճարելու համար:

— Բ. Գուռը զեպաններուն առողջապահական խորհրդի մասին տուած ծանուցագրին պատասխանելով, մանրամասնօրէն հերքած է զեպաններուն փաստերը և յայտնած է թէ՛ Բ. Գուռը բացարձակապէս իրաւունք ունի միջազգային առողջապահական ժողովին ուղած մարզը անգամ հրաւիրելու, առանց այդ առթիւ ժողովին կամքը հարցնելու:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Բրէնս Պօրիսի առողջապահական վիճակը գոհացուցիչ է:

— Ընտրութիւնները առհասարակ խաղաղ կերպով անցեր են բոլոր գաւառներու մէջ: Միայն Միլիպէ, Քարշը-Նաքայի կողմը երկու մարդ սպանուեր է, մէկ մարդ էլէշնիճի գիւղին մէջ, մէջմէկ մարդ Քարլօփի, Սթարա-Չակօրայի, Թ. Բաղարձըղի և Քէսարէօփի մէջ, ընդ ամէնը եօթը հոգի:

— Սօֆիայի Պուլիար հրացանաձիգ ընկերութիւնը փետր. 2ին միթինկ մը պատրաստուեր է գումարել, այդ ընկերութիւնը լուծելու մասին ներքին գործոց նախարարութեան տուած որոշումին դէմ: Միթինկը տեղի պիտի ունենայ եղեր կէս օրէն ետքը ժամը 2ին Սլավէյքօվ սրահին մէջ, ուր պիտի որոշուի թէ ինչ միջոցներ ձեռք պէտք է առնել ընկերութեան գոյութիւնը ապահովելու համար:

— Նոյն ընկերութիւնը յայտարարութիւն մը ցրուած է նախարարպետ Բեթրովի դէմ, որ ընկերութեան լուծումը և հրացաններու անմիջական յանձնումը կը պահանջէր:

— Պուլիարական թերթ մը կը կարծէ թէ նախարար Բէթրովի հրացանաձիգներու դէմ տուած հրամանը, Ուստրիոյ խնդրանքին վրայ եղած է: Սակայն Սվէթ կը գրէ որ ոչ թէ Սուտրիան, այլ ուրիշ պետութիւններ, որոց մէջ է նաեւ Ռուսիա, խնդրած են ճնշիչ միջոցներ ձեռք առնել այս կազմակերպութեան դէմ, որ Պալքաններու խաղաղութեան կը սպառնայ:

— Կազանդին տեղի ունեցող մարգահամարէն յայտնի եղեր է

թէ՛ Սօֆիա քաղաքը 76,562, Միլիպէն՝ 37,856, Վառնան՝ 31,016 իսկ Ռուսուոգ՝ 29,435 բնակիչ ունի:

Ս Ե Ր Պ Ի Ա

Հանգուցեալ Միլանի մարմինը Պելկրատ պիտի բերուի և փառաւոր յուղարկուութեանէ մը ետքը պիտի ամփոփուի իր փառքին համաձայն հունգարական հողին վրայ Սիււմիի վանքին մէջ:

— Սքուբչինայի մէջ Միլանի մահուան գուժը իմացուելով, նիստը ընդհատուեր է և նախագահ Իվանովիչ ըսեր է. «Պատմութիւնը հանգուցեալին գործը պիտի դատէ. իսկ մենք, ամէնքս պիտի յիշենք զինքը: Սերպիոյ կատարեալ անկախութիւնը և հողային ընդարձակումը սերտիւ կապուած է իր անունին հետ: Վերջին գէպքերը իր Սերպիայէն մեկնելուն պատճառաւ եղած էին. բայց իր ծառայութիւնները անմոռանալի կը դարձնեն զինքը»: Սքուբչինայի անգամները խմբովին ներկայ պիտի գտնուին յուղարկուութեան:

— Ալէքսանտր թագաւորը հրատարակէ Վիէննա երթալու դիտաւորութեանէն, երբ իմացեր է թէ արդէն շատ ուշ է:

— Միլան վերջին ժամերուն իր մահը զգալով ըսեր է խնամող բժշկին. «Կը զգամ թէ պիտի մեռնիմ, և սակայն տխուր բան է 47 տարեկան մեռնիլը», և միշտ կը հարցնէ եղբւր բժիշկին թէ՛ արգեօք ապատելու ճար մը չի կայ:

— Եւրոպական բոլոր թերթերը Միլանի մասին յօդուածներով լեցուած են: Բոլորն ալ զայն կը նկատեն իբրև պետական մարդու յատկութիւններով օժտուած մէկը, բայց խստիւ կը դատափետեն սոսկական մարդը:

Ս Պ Ա Ն Ի Ա

Մատրիտի կացութիւնը կը շարունակէ մտատանջութիւն պատճառել, թէեւ ոստիկանութիւնը ամէն ճիգ կը թափէ ցըրուելու համար ցոյցերը, որոնք կատաղութեամբ կը յարատեւեն: Ոստիկաններու խումբեր ճիգ ու թիթներու բնակարաններուն մուտքը կը պահպանեն: Չերբակալութիւնները խիստ շատ էին, որովհետեւ ցոյցարարները միայն ուսանողներ չէին, այլ քաղաքակտն կուսակցութիւններու անդամներ: Փողոցները ոչ կին կը տեսնուի ոչ տղայ. խանութպանները մոտատանջ են, և պատրաստ պզտիկ ցոյց մը ըլլալուն պէս խանութները փակելու: Ոս-

տէկանէութիւնը ամենախիստ միջոցներ ձեռք առեր է ցոյցերը արգելելու համար. ճիւղերները մերկ սուրբով հրապարակները կը սպասեն և խռովարարները կը հարուածեն:

— Մատրիտի և ուրիշ մէկ քանի քաղաքներու, մասնաւորապէս Սարակոսայի ցոյցերը ոչ այնքան կղերականներու դէմ էին, որքան հանրապետականներու մէկ խլրտումը, որ բուն ցոյցերով ուղեց ամենի 1873ի հասարակապետութեան տարեգարձը:

Հանրապետական թերթերէն ոմանք խաբանուած, սերշներ դատի տրուած են, ինչ որ սակայն չէ կրցած արգելք ըլլալ ամենաբուն յօդուածներու հրատարակման: Չինտորակտն թերթերն իսկ կը պաշտպանեն ժողովրդական ցոյցերը: Իսկ պահպանողականները և կաթոլիկ կղերկը կը դրուատէ կառավարութեան ցոյց տուած կորոզի ու արիւթիւնը:

— Կրնասայի մէջ ցոյցարարները զինամատուց մը խանութ խոյս տալով, փորձեր են զէնքերը յափշտակել: Խանութպանը կրակ ըրեր է և ոստիկանութիւնը միջամտելով ցրուեր է յարձակողները:

Պ Ա Ր Ո Հ Ա Ն Դ Է Ս

Վաղը հինգշաբթի գիշեր տեղի պիտի ունենայ ի նպատակ տեղւոյս Ազգ. երկսեռ վարժարաններու ընտանեկան պարահանդէս մը, Մանուկեան եղբարց շէնքին մէջ:

ԱՌՈՂՁԱՊԱՀԻԿ ՄԻՉՈՑ ՄԻՆ ԱԼ

Եթէ կուզէք կուրծքի եւ շնչառութեան զանազան տեսակ հիւանդութիւններէ զերծ մնալ, ծխեցէք Ազգ. Հիւանդանոցի Ա. Փրկչի սիկարի թուղթը: Պատրաստուած է այս անգամ Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութեան յատուկ խնամքով, ֆրանսական առաջին տեսակ թուղթէ: Ինչպէս չորս տարիէ ի վեր Պուլիարի միակ մասնաճիւղն եղած եմ, եւ ինչպէս Շարժուի ազնիւ ընթերցողաց ծանօթ է. մէկէ աւելի անգամներ յայտարարած եմ, անգամ մը եւս կուզամ յարգոյ յաճախորդներու յայտարարել թէ, ի նորոյ գաղղիական, Կ. Պոլսոյ եւ տեղական ընտիր տեսակ թուղթերու հետ նոյնպէս Ազգ. Հիւանդանոցի առաջին տեսակ թուղթէն մեծաքանակ բերել տուած եմ: Յանձնարարութիւնք փութով եւ ճշդիւ կը կատարուին, միայն պիտի կանխիկ, Դիմելի

Թիւ 51, Ուզուն Չարչի Փ. Պօլսո ՏԻԳՐԱՆ Յ. ՏՈՒՄԱՆԱՆ 4-5

ОТГОВОРНИКЪ: Д-ръ М.Ж.ЖРДИЧЪ ВАРТАНЪ

Печ. «Взаимность» — Варна.